

«Թամարա Ֆրոյթ» ՓԲԸ-ի, ՀՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարությունների համատեղ քննարկումների արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2009 թվականի փետրվարի 12-ի 180-Ա որոշմամբ հաստատվել է «Թամարա Ֆրոյթ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող օրգանիկ այգիների ստեղծման ծրագիրը, որով առաջարկվել է 60 հա այգիների (ազնվամորու, մոշի, սև և կարմիր հաղարջի) հիմնում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել օրգանիկ գյուղատնտեսության գիտաարտադրական կենտրոն: Հատապտղային այգիների ստեղծման կապիտալ ծախսերը՝ տնկիներ, հենասյուներ, մետաղալար, բիոհումուս և բուժանյութ (առաջին երկու տարին), անհրաժեշտության դեպքում՝ ագրոտեխնիկա, իրականացվում է պետական դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ շրջանառու միջոցները՝ ջրի վարձ, այլ վարձեր, մեխորացիոն աշխատանքներ, աշխատավարձ՝ ֆերմերների սեփական միջոցների կամ ֆերմերներին տրվող գյուղատնտեսական վարկերի հաշվին:

Օրգանիկ հատապտղային այգիները նախատեսվում է հիմնել շարային սկզբունքով, միջշարային տարածքները՝ 2.5 մետր, սյուների հեռավորությունը շարքերում՝ 5 մետր, տնկիների միջև հեռավորությունը՝ 0.4-0.5 մետր:

Մեկ հեկտարի համար հարկավոր են հենասյուներ՝ 800 հատ, մետաղալար՝ 12000 մետր, երեք շարքով, տնկիներ՝ 7500 հատ, բիոհումուս՝ տարեկան՝ 20 տոննա գոմաղբ՝ երկու տարվա համար -40 տոննա, բուժումներ՝ տարեկան մեկ անգամ (օրգանիկ դեղանյութեր) երկու տարվա համար՝ 2 անգամ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ծրագրում ընդգրկվել ցանկացողների համար ծրագրի մեկնարկից մեկ ամիս առաջ մամուլում հրապարակվում է հայտարարություն: Ծրագրում կարող են ընդգրկվել այն տնտեսավարողները, որոնք կբավարարեն հետևյալ պահանջները՝ թվարկված հատապտուղների մշակման պահանջները բավարարող ոռոգելի հողատարածք, համապատասխան բնակլիմայական պայմաններ, օրգանիկ տարբերակով օգտագործման հնարավորություն, աշխատուժի առկայություն, միավոր հողատարածքի մակերեսը՝ առնվազն 2-3 հեկտար:

Առավելությունը տրվում է այն մենատնտեսներին կամ գյուղացիական տնտեսություններին, որոնք, նշված ծրագրում ընդգրկվելուց բացի, տիրապետում են պտղատու այգիների մշակման աշխատանքային փորձին և պատրաստակամություն կհայտնեն դրանք փոխակերպելու օրգանիկ այգիների:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի մայիսի 25-ի «Թամարա Ֆրոյթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «օրգանիկ այգիների ստեղծման համար հողատարածքների ընտրության նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» N 137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովն ուսումնասիրություններ է կատարում տնտեսավարող սուբյեկտների հողատարածքները և օրգանիկ այգիների հիմնման ծրագրով ներկայացվող պահանջներին համապատասխանության դեպքում

տալիս եզրակացություն: Հողատարածքների վերջնական ընտրությունը կատարվում է համատեղ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, «Թամարա Ֆրութ» ՓԲԸ-ի և միջազգային պահանջները բավարարող օրգանիկ այգիների սերտիֆիկացմամբ զբաղվող «Էկոգլոբ» ՍՊԸ-ի կողմից՝ կոնսենսուսի սկզբունքով:

«Թամարա Ֆրութ» փակ բաժնետիրական ընկերության օրգանիկ այգիների ստեղծման ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի մայիսի 25-ի N 137-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովն տարվա ընթացքում ուսումնասիրություններ է կատարել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն դիմած տնտեսավարող սուբյեկտների հողատարածքներում, որի արդյունքում 2014 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի 2 տնտեսավարող սուբյեկտի հետ կնքվել են պայմանագրեր՝ ընդհանուր առմամբ 4 հա-ի համար:

Վերոգրյալ ծրագրի շրջանակներում 2009 թվականից մինչև 2014 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ընդհանուր առմամբ թվով 19 ֆերմերի հետ կնքվել են պայմանագրեր՝ 59 հա օրգանիկ այգի հիմնելու համար: